

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 07.11.25, ուղարկվել է գրախոսման՝ 11.11.25, երաշխավորվել է տպագրության՝ 24.12.25

Ներածություն: Մեր օրերում գիտության որակը, դրա՝ ինչպես արդյունաբերատեխնոլոգիական, այնպես էլ մշակութափաստաբանական ոլորտներում հիմնախնդիրները համապարփակ լուծելու ունակությունը կանխորոշում են երկրի զարգացման մակարդակը: Գիտության բոլոր ոլորտների հետազոտությունների արդյունքայնությունից է կախված պետության սուվերենությունը, անվտանգությունը, բարեկեցությունը, ազգային ինքնության պահպանման ու ամրապնդման հնարավորությունը, իրավաքաղաքական և մշակութային ավանդույթների ժառանգականությունը: Գիտությունը նաև հզոր արտադրողական ուժ է, որն ի վիճակի է բարձրացնել երկրի զարգացման մակարդակը, մարդկանց կյանքի որակը: Ակնհայտ է, որ գիտատեխնիկական և ինովացիոն գործունեությամբ զբաղվողների համար ստեղծված իրավական դաշտը անմիջական ազդեցություն է գործում տվյալ գործունեության գրավչության, արդյունավետության, ինչպես նաև ինովացիաների ներդրման տեմպերի վրա: Օրենսդրական դաշտը պետք է գիտության և ինովացիոն գործունեության համար ստեղծի առավելագույն հարմարավետ պայմաններ, համապատասխանի պետության առջև ծառացած խնդիրների լուծմանը: Վերոնշյալով էլ պայմանավորված է սույն հոդվածի թեմայի արդիականությունը: **Մեր նպատակն է** գիտության օրենսդրական կարգավորման հիմնահարցերի բացահայտմամբ նախանշել դրանց լուծմանը միտված առաջարկություններ: Հիշյալ նպատակի իրացման համար **խնդրադրել ենք** ուսումնասիրել գիտության օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում, բնութագրել գիտության իրավունքի տարանջատման չափանիշները, ներկայացնել ՀՀ հարկային օրենսդրությամբ գիտական գործունեության համար սահմանված արտոնությունները, բացահայտել գիտական գործունեության օրենսդրական կարգավորման առկա բացերը, առաջարկել դրանց վերացման ուղիներ:

Գրականության վերլուծություն: Գիտական գործունեության իրավական կարգավորման հարցերը արդի գիտատեխնիկական առաջընթացի արագության և կարևորման ֆոնին շարունակում է իրավագիտության համար մնալ «էկզոտիկ»: Գիտության պետական կառավարման արդյունավետ համակարգի ստեղծման հիմնահարցերը պետք է ընկած լինեն գիտության և տեխնոլոգիայի զարգացման բոլոր ռազմավարությունների հիմքում: «Պետական քաղաքականությունը պետք է չսահմանափակի գիտությունը, այլ ուղղորդի այն հանրային նպատակներին

համապատասխան»¹, իսկ «Գիտության իրավական դաշտը պետք է ապահովի գիտության և գիտնականների անկախությունը՝ հանուն մարդու իրավունքների, սոցիալական առաջընթացի և բնապահպանական կայունության»²: Աշխարհում պարբերաբար քննարկվում է տեխնոլոգիական, արհեստական բանականության, տվյալների սեփականության և գիտության փոխհարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությունը³.

ՌԴ-ում գիտական գործունեության իրավական կարգավորման ընթացիկ իրավիճակը Դ.Ա.Սավչենկոյի կողմից գնահատվում է ծայրահեղ՝ նկատի ունենալով իրավունքի նորմերի ավելորդ կարգավորումները: Ըստ նրա «Գիտության և գիտատեխնիկական քաղաքականության մասին» ֆեդերալ օրենքում առկա դրույթները յուրօրինակ իրավական սպառնալիք են գիտության համար, քանզի դրանք խաթարում են գիտության զարգացմանը, ստեղծում անհիմն ու անարդար խոչընդոտներ⁴: Հարկ է ընդունել Սավչենկոյի տեսակետը այն հիմքով, որ կարգավորող նորմերի ավելցուկը, բյուրոկրատիան բացասաբար է ազդում գիտական գործունեության արդյունավետության վրա: Հետևաբար, գիտության իրավական կարգավորման խնդիրներից մեկը պետք է լինի գիտական գործունեությունը բարդացնող օրենսդրական դրույթների վերանայումը: Հարկ է նաև հիշել գիտության իրավական կարգավորման յուրաքանչյուր ձևի օգտագործումից բխող ռիսկերի մասին: Այսպես, դիսպոզիտիվ մեթոդը ուղեկցվում է գիտության առևտրայնացմամբ, որը տնտեսության իրական հատվածում գիտական գործունեության արդյունքների ներդրման դրական էֆեկտին զուգահեռ կարող է ուղեկցվել գիտական գործունեության գնահատման ոչ համարժեք շուկայական չափանիշների ներդրմամբ: Մյուս կողմից, իմպերատիվ մեթոդը կարող է դանդաղեցնել գիտական գործունեությունը, դրա ֆինանսավորումն ու պետական աջակցությունը: Թերևս, պատահական չէ, որ որոշ ռուս գիտնականներ առաջ են քաշում գիտության իրավունքի գոյության խնդիրը որպես ռուսական իրավունքի կոմպլեքս ճյուղ⁵: Գիտական գործունեության ոլորտում հարաբերությունների կարգավորման հատուկ ճյուղի գոյության գաղափարը դեռևս 1950-ական թվականներին արտահայտել է Ի.Գ. Ֆեդկինը⁶: Մ.Պ.Ռինգը ևս հանդես եկավ

¹ Stilgoe, J., Owen, R., & Macnaghten, P. (2013). *Developing a framework for responsible innovation*. Research Policy, 42(9), 1568-1580. <https://doi.org/10.1016/j.respol.2013.05.008>

² UNESCO. (1999). *World Conference on Science: Science for the 21st Century*. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000127435>

³ Floridi, L. (2014). *The Fourth Revolution: How the Infosphere is Reshaping Human Reality*. Oxford University Press. <https://global.oup.com/academic/product/the-fourth-revolution-9780199606726>

⁴ Савченко Д.А. Механизм правовой охраны научных отношений: основные элементы // Российско-азиатский правовой журнал. 2020, N2, С28

⁵ Алесеев С.С. Структура советского права. М.: Юридическая литература. 1975, С.176

⁶ Федькин Г.И. Правовые вопросы организации научной паботы в СССР. М.: Госюриздат, 1958, С.340

հատուկ գիտության իրավունքի ձևավորման դիրքորոշմամբ⁷: Այդ ամբողջ ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև սովետական կարգերի փլուզումը, ԽՍՀՄ-ում հնչել է գիտության մասին հատուկ օրենքի ընդունման գաղափարը, որն այդպես էլ չընդունվեց: Դրանով հանդերձ այդ տարիներին գիտությունը բավարար զարգացավ, մինչդեռ այսօր մեր հայկական իրականությունում, չնայած իրավական ակտերի բազմազանությանը, գիտության իրավական կարգավորումը արդյունավետ չէ: Պատճառն այն է, որ գիտության որակական բնութագիրը կախված է ոչ միայն իրավական կարգավորումից, այլև պետության գիտատեխնիկական քաղաքականությունից, դրա նպատակներից ու խնդիրներից, գաղափարախոսությունից, կադրային հենքից և ֆինանսական ապահովումից: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Մեմյոնովը փորձել է բացահայտել «գիտություն» հասկացությունը՝ այն ներկայացնելով որպես «ինտելեկտուալ արտադրության հատուկ ոլորտ կամ ձև՝ կապված իրականության մասին օբյեկտիվ գիտելիքների գեներացման, ստուգման և համակարգման հետ»⁸:

Գիտական գործունեության իրավական կարգավորմանը նվիրված ամերիկյան գիտական աշխատություններից կառանձնացնելի Ա.Չեմբեռլենի «Գիտությունն ու անվտանգությունը սեպտեմբերի 11-ից հետո ձևավորված միջավայրում. փորձագիտական հսկողություն, դրամաշնորհներ, պայմաններ և հրապարակումներ»(2004թ.)⁹ և Ֆիտցպատրիկ Ջ.Պ., Պուստեյ Մ.Ա. «Ոչ գաղտնի ինֆորմացիայի վերահսկողության կառավարումը և տեղեկատվական ազատության մասին օրենքը» (2011թ.)¹⁰: Գիտակրթական միջավայրի որպես օրենսդրական կարգավորման առարկայի վերլուծությունը իրականացրել են հետևյալ հայտնի դեմքերը. Ա.Ա.Բոլոնկին, Ջ.Յու.Ստիգլիցը, Մ.Ֆրիդմանը, Ֆ.Գ.Կոմբսը, Վ.Պոտտերը, Ռ.Շմիդտը, Ռ.Ֆիշերը, Ա.Վիլյամսկին, Ռ.Վ.Վասսմերը, Ա.Բ.Կրյուգերը, Ջ.Գրանտը, Կ.Ի.Մյուրեյը և այլք:

Մեթոդաբանություն: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական հետազոտության համեմատական, նկարագրական, տնտեսավիճակագրական և համադրման **մեթոդներ**: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտին առնչվող գիտական աշխատությունները, ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, պաշտոնական վիճակագրական տվյալներն ու զանազան զեկոլոյցներ:

⁷ Ринг М.П. Правовое регулирование научно-технического прогресса//Советское государство и право.1972.№2 С.113

⁸ Семенов Е.В. Научно-технологическая сфера(сфера НИОКТР):способы представления объекта/Е.В. Семенов// Наука.Инновации.Образование 2013 №14

⁹Science and Security in a Post 9/11 World: A Report Based on Regional Discussions Between the Science and Security Communities. <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK11485/>

¹⁰ Kraemer JD .The Limits of Government Regulation of Science.<https://www.science.org/doi/10.1126/science.1219215>

Վերլուծություն: Մեր օրերում գիտության և կրթության համակարգի կառավարումը լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Գիտական գործունեության կարգավորման օրենսդրության հետ կապված շատ հիմնահարցեր կան, սակայն գլխավոր ուղղությունը գիտության վերաբերյալ նոր օրենքի ընդունումն էր: Այստեղ պետք է պատասխանել ամենասկզբունքային հարցին. ինչպիսին պետք է լինի երկրում գիտական գործունեության օրենսդրական կարգավորման համակարգը: Մեր կարծիքով պետք է լինի հիմնարար մի օրենք, որի կարգավորման շրջանակը կընդգրկի բոլոր հարցերը: Իրավունքի համակարգում «գիտության իրավունքի»՝ որպես ինքնուրույն տարրի տարանջատման համար անհրաժեշտ է առանձնացնել երկու կարևոր հանգամանք.

- իրավական կարգավորման ինքնուրույն առարկայի առկայությունը,

- իրավական կարգավորման յուրահատուկ մեթոդի առկայությունը:

Կարելի է նաև առաջարկել իրավաբանական գրականությունում տարանջատման լրացուցիչ չափանիշներ. իրավունքի սկզբունքներ, կողավորված փաստաթղթի առկայություն, ինքնուրույն ակադեմիական դիսցիպլինայի գոյություն, հատուկ գիտական ուղղություն և այլն: Իհարկե, գիտության իրավունքի առարկան սերտ կապված է գիտության էության հետ՝ որպես մարդկային գործունեության բազմազանություն: Փիլիսոփայության մեջ գիտություն հասկացության շուրջ առկա բանավեճից անկախ ձևավորվել են մի շարք մոտեցումներ.

- գիտությունը որպես գիտելիք, ճանաչողության ձև, նոր գիտելիքի յուրացման գործընթաց,

- գիտությունը որպես գիտելիքի վերարտադրության սոցիալական ինստիտուտ:

- Դասական տարբերակով գիտության բնութագրիչների թվին են դասվում.

- նոր գիտելիքի յուրացման պարբերականությունը,

- գիտելիքի նորույթը, ճանաչման ռացիոնալ բնույթը,

- փորձերի միջոցով գիտելիքի ստուգումը,

- գիտելիքի ներքին հակասության բացակայությունը,

- գիտական գիտելիքի վերարտադրության, փոխանցման հնարավորությունը,

- արժանահավատությունը, օբյեկտիվ իրականության հետ գիտական գիտելիքների համապատասխանությունը¹¹:

Ի.Վ.Չերնիկովան գիտական ռացիոնալության տիպերի վերաբերյալ գրել է. «Գիտական ռացիոնալության դասական տիպում ուշադրության կենտրոնում օբյեկտն է. ինչքանով է հնարավոր սուբյեկտին ու գործունեության միջոցներին վերաբերող ամեն ինչ փակագծերից հանել: Ոչ դասական ռացիոնալությանը բնորոշ է օբյեկտի և միջոցների, գործողության ձևերի միջև կախվածությունը, կապի

¹¹ Степин В.С. Философия науки. Общие проблемы. М.: Гардарики, 2006. С. 34

գաղափարը, այդ միջոցների հաշվառումը օբյեկտի վերաբերյալ իրական գիտելիքների ձեռքբերման պայման է»¹²:

Հարկ է նաև գիտակցել, որ գիտության ոլորտը շատ զգայուն է, կապված է ստեղծագործական և ինտելեկտուալ բնության, ներշնչանքի և ոգևորության հետ, որոնք չեն կարող դետերմինացվել իրավունքի հարկադրանքի ուժով: Սա, իհարկե, չի ենթադրում, որ այս ոլորտում պետք է գերիշխի ինքնակարգավորումը, որ պետական քաղաքականությունն այստեղ պետք է բացակայի: Իրավական կարգավորումը, ըստ էության, չի կարող գիտատեխնիկական առաջընթաց ապահովել, սակայն այլ սոցիալական կարգավորիչների հետ մեկտեղ պետք է նպաստի այն ինստիտուտների առաջացմանն ու զարգացմանը, որոնք կտան սոցիալապես օգտակար արդյունք: Այսօր գիտատեխնիկական գործունեությունը կարգավորող օրենսդրությունը թերաթեք է. կարգավորման առարկայի անորոշությունը, համակարգվածությունը, օրենսդրության զարգացման գիտական հիմնավորվածության բացակայությունը: Այժմ փորձենք վերլուծել ՀՀ գիտության ոլորտը կարգավորող օրենսդրության հիմնական դրույթները: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-285-Ն, առ 09.10.2025թ.) մեկտեղել է բարձրագույն կրթության և գիտության իրավական կարգավորման գործընթացը: Այս օրենքով կարգավորում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգերում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերությունները, սահմանվում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն ու իրականացման սկզբունքները: Հիշյալ օրենքի ընդունմամբ ուժը կորցրած են ճանաչվել տևական ժամանակ դաշտը կարգավորող մի շարք օրենքներ՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենքը, «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» 2015 թվականի ապրիլի 7-ի ՀՕ-23-Ն օրենքը:

«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-63-Ն, 14.06.2006թ.) 11-րդ հոդվածով սահմանված է, որ ՀՀ-ն խրախուսում է ինովացիոն գործունեության ոլորտում միջազգային համագործակցությունը՝ միջազգային պայմանագրերի, միջազգային ինովացիոն ծրագրերի և նախագծերի շրջանակում, ինչը, սակայն, գործնական կիրառման մեխանիզմներով չամրագրվեց: Այս օրենքից բխող և ոլորտը կարգավորող հետևյալ նորմատիվային իրավական ակտերն են ընդունվել ՀՀ-ում:

- «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության առ 19.10.2006թ. N1466 որոշումը,

¹² Черникова И.В. Природа науки и критерии научности// Гуманитарный вектор 2012. N3. С.94

-«Ինովացիոն բնագավառում լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության առ 07.09.2006թ. N1252U որոշումը,

-«Ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության առ 02.08.2007թ. N878-Ն որոշումը,

-«Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության առ 02.08.2007թ. N877-Ն որոշումը,

-«ՀՀ կառավարության 2007թ օգոստոսի 2-ի N878-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության առ 12.11.2015թ. N1311-Ն որոշումը,

-«Ինովացիոն նախագծերի մրցույթի հայտի ձևը և գնահատման չափանիշները սահմանելու մասին» ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 02.03.2016թ. N166-Ն հրամանը,

-«ՀՀ կառավարության 2007թ օգոստոսի 2-ի N878-Ն և ՀՀ կառավարության 2015թ նոյեմբերի 12-ի N1311-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության առ 12.05.2016թ. N483-Ն որոշումը,

-ՀՀ կառավարության 17.02.2011թ. N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության Հայեցակարգը:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-142-Ն, առ 04.07.2006թ.) կարգավորվում են նաև գիտության արդյունքների նկատմամբ դրանց հեղինակների իրավունքների հետ կապված հարաբերությունները: Հատկանշական է, որ հեղինակի գույքային իրավունքները գործում են ոչ միայն հեղինակի կյանքի ընթացքում, այլև նրա մահից հետո 70 տարի:

Գիտության իրավական կարգավորման տրամաբանությունը պետք է բխի գիտական գործունեության ներքին օրինաչափությունից: Կարելի է առանձնացնել գիտական գործունեության զարգացման հետևյալ պարբերաշրջանները.

-գիտատեխնիկական գաղափարների գեներացում, որը հանդես է գալիս որպես մարդկային մտավոր գործունեության բազմազանություն և որպես այդպիսին անմիջականորեն չի ենթարկվում պետական-իրավական կարգավորման: Գիտական գաղափարների գեներացման համար հանրային իշխանության մարմինները կարող են ձևավորել նպաստավոր պայմաններ. ստեղծել գիտական կազմակերպություններ, որոշակի առաջնահերթություններով ֆինանսավորել գիտական աշխատանքները, հաստատել գիտաշխատողի իրավական կարգավիճակը, համակարգային արդյունավետ ատեստավորման կարգը, իրականացնել գիտության արդյունավետ պետական կարգավորում.

-գիտատեխնիկական գործունեության արդյունքների ձևակերպում. Այստեղ կիրառվում են մտավոր սեփականության իրավունքի նորմերը, գիտափորձարարական գործունեության իրականացման կանոնները.

-գիտատեխնիկական գործունեության արդյունքների կիրառում առևտրային(ինովացիոն հարաբերություններ) նպատակով. այստեղ հանրային

իշխանությունը կարգավորում է արտադրություն-առևտրայնացում և ներդրման գործունեության ոլորտում գիտական հայտնագործությունների օգտագործման կարգը:

Գիտությանը, տեխնիկային և տեխնոլոգիային վերաբերող ցուցանիշները պայմանականորեն բաժանվում են 2տիպի. մուտքի և ելքի ցուցանիշների: Մուտքի ցուցանիշներն են՝ հետազոտությունների և մշակումների ներքին ծախսերը, դրանց հարաբերակցությունը ՀՆԱ-ին, անձնակազմի թվաքանակը, այդ թվում տնտեսությունում զբաղված 10.000մարդու հաշվով, գիտական հետազոտությունների և մշակումների հիմնական միջոցների արժեքը: Ելքի ցուցանիշների թվին են դասվում համահեղինակությամբ հրապարակվող հոդվածները, միջազգային արտոնագրերը, բարձրտեխնոլոգիական նոր արտադրանքը և այլն:


Այսօր գիտական հանրույթին հուզող ամենախնդրահարույց հարցերից մեկը գիտաշխատողների ատեստավորումն է: «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով որպես ատեստավորման նպատակ նշված էր.

«ա)գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները.

բ)պարզել գիտական աշխատողի մասնագիտական որակի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին:»:


Սակայն ասվածը գործնականում վեր էր ածվել հիմնականում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրված գիտական աշխատանքների հեղինակման պահանջի: Ինչպես կարելի է պարզել գիտական աշխատողի մասնագիտական որակի համապատասխանությունը միայն անհրաժեշտ հրապարակումների թվով, որոնք մեր հայ իրականության մեջ վերածվել են ստվերային դրսևորումների, երբ շատ հեղինակներ պատշաճ մասնակցություն չեն ունենում ընդհանուր գիտական աշխատանքին: Կամ ինչպես կարելի է գիտական աշխատողին ատեստավորել առանց նրա մասնակցության՝ միայն ներկայացված փաստաթղթերով: ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 21-ի N2298-Ն որոշմամբ հաստատված «Գիտական կադրերի ատեստավորման կարգի, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշների» համաձայն գիտական աշխատողի ատեստավորման համար ձևավորվում է հանձնաժողով, որը փակ գաղտնի քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ ընդունում է որոշում: Ըստ իս, այս ամրագրումն հիմնված է այն կանխավարկածի վրա, որ հանձնաժողովի բոլոր անդամները պետք է ելնեն բացառապես ներկայացված փաստաթղթերի ազնիվ գնահատումից. այս դեպքում ի՞նչ իմաստ ունի փակ գաղտնի քվեարկությունը: Իսկ եթե պահանջվող փաստաթղթերի բացակայության պարագայում հանձնաժողովի պարզ մեծամասնությունը առաջարկի «Համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի» գնահատականը, որի առթիվ

ատեստավորողը, բնականաբար, չի բողոքի: Հստակեցման կարիք ունի նաև ատեստավորման հանձնաժողովի ձևավորման մասին դրույթը, ըստ որի «Ատեստավորումն անցկացնելու համար կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծվում է տվյալ բնագավառի կամ մասնագիտության, որպես կանոն, յոթ գիտության ոլորտում նշանակալի ավանդ ունեցող գիտնականներից բաղկացած ատեստավորման հանձնաժողով(այսուհետ՝ հանձնաժողով):»Նախ «յոթ գիտության ոլորտում նշանակալի ավանդ ունեցող գիտնականներից» արտահայտության մեջ թվականը պետք է լիներ «գիտնականներից» բառից առաջ, երկրորդ, սրանով հստակ չէ, թե ատեստավորողը կարող է լինել հանձնաժողովի անդամ, թե՛ ոչ: Ստացվում է, որ հանձնաժողովի անդամը իր և մերձավորների համար կարող է կողմնակալ լինել: Ըստ նշված կարգի 21-րդ կետի «Կազմակերպության ղեկավարը, հանձնաժողովի երաշխավորության հիման վրա, իր լիազորությունների շրջանակում կայացնում է պաշտոնի բարձրացման, իջեցման կամ պաշտոնից ազատման, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափի փոփոխման ու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հավելավճարի տրամադրման որոշում:», այս դրույթը իմպերատիվ բնույթ չունի, ժամկետի սահմանումն էլ կարևոր է. երբ է կայացնում որոշում, արդյոք այդ որոշումից բխող ֆինանսական հնարավորությունները հաշվի են առնվել: Կարգի շարադրանքից բխում է, որ 23-րդ կետում ատեստավորման ոչ ենթակաների ցանկում պետք է լինեին նաև պարտադիր գիմվորական ծառայության մեջ գտնվողները: Թերևս տրամաբանական չէ, որ աշխատանքային կամ անաշխատունակության հիմքով արձակուրդում գտնվողները ենթակա են ատեստավորման, իսկ հղիության և ծննդաբերության ու մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից վերադարձածները՝ ոչ. ըստ էության ատեստավորումը փաստաթղթային է, իսկ հղիության կամ երեխայի խնամքի արձակուրդում գտնվող գիտաշխատողը հնարավոր է նախորդող բոլոր 5 տարիներին լիարժեք գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորություն ունենալ: Ըստ հիշյալ կարգի 26-րդ կետի՝ «ատեստավորման գնահատման չափանիշները սահմանելիս հաշվի են առնվում նաև կազմակերպությունում գիտական պաշտոնների տարակարգի համար սահմանվող հավելյալ քանակական և որակական պահանջները», սակայն հստակեցված չէ, թե հանձնաժողովը ինչպես է դրանք հաշվի առնում. առաջնորդվում է նվազագույն պահանջներով, թե՛ հավելյալ: «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված էր, որ գիտական աստիճան ունեցող անձանց կենսաթոշակից բացի պետությունը պետք է կառավարության սահմանած կարգով հավելավճար տրամադրեր, սակայն նշված դրույթը այդպես էլ կյանքի չկոչվեց: Կարծում ենք, սա շատ կարևոր հանգամանք է թե գիտնականի սոցապահովության տեսակետից, թե ոլորտը երիտասարդի համար գրավիչ դարձնելու առումով: Համաձայն նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի՝ սկսած 2002թ. բյուջեի ծախսերի 3%-ը պետությունը պետք է ուղղի գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորմանը: Մեր կողմից ուսումնասիրվել է օրենքի պահանջի կատարումն վերջին տասը տարիներին, արդյունքում ունենք 3 տոկոսի փոխարեն 0.9 տոկոս միջին ցուցանիշ:



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում գիտության ոլորտի ծախսերի մասնաբաժինը 2015-2024թթ.¹³

Չնայած այս իրավիճակին՝ պետք է փաստել, որ դիտարկվող ժամանակաշրջանում գիտության ծախսերի միջին տարեկան աճի տեմպը՝ 15.5 տոկոսը, գերազանցել է պետական բյուջեի ծախսերի աճի միջին տեմպին՝ 9.3 տոկոսին:



Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեի և գիտության ծախսերի աճի տեմպերը նախորդ տարվա համեմատ 2015-2024թթ, %¹⁴

Գիտության զարգացումը ենթադրում է նաև դրա արդյունքների առևտրայնացում, իսկ որպեսզի այն որպես ձեռնարկատիրական գործունեության ոլորտ գրավիչ լինի, պետք է բավարար շահութաբերություն մակարդակ ապահովի: Պետական քաղաքականությունը ոլորտի զարգացմանը պետք է նպաստի նաև հարկային արտոնությունների միջոցով: Ուստի մեր հաջորդ խնդիրն էր ներկայացնել

¹³ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներ

<https://www.gov.am/files/docs/5819.pdf>, <https://www.gov.am/files/docs/5147.pdf>,
<https://www.gov.am/files/docs/5146.pdf>, <https://www.gov.am/files/docs/4337.pdf>,
<https://www.gov.am/files/docs/3929.pdf>, <https://www.gov.am/files/docs/3124.pdf>
<https://www.gov.am/files/docs/2575.pdf>, <https://www.gov.am/files/docs/2014.pdf>,
<https://www.gov.am/files/docs/1697.pdf>, <https://www.gov.am/files/docs/1470.pdf>

¹⁴ Նույն տեղում

գիտության ոլորտի համար ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հիմնական արտոնությունները: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 3) ենթակետի ԱԱՀ-ից ազատված է կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների կատարումը: Շահութահարկի հաշվարկման առումով ծախսերի հաշվառման առանձնահատկություն կա ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում, ըստ որի կառավարության սահմանած չափերով կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների շրջանակում անմիջականորեն ներմուծողի կողմից ներմուծվող, ձեռքբերվող հիմնական միջոցների (բացի անշարժ գույքի) ամորտիզացիայի նվազագույն ժամկետը սահմանվում է շահութահարկ վճարողի կողմից, ոչ պակաս 1 տարուց: ՀՀ հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ կետի 2) ենթակետով լրացուցիչ նվազեցում է նախատեսված միայն կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեություն իրականացնող ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված անձանց աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների համար 200%-ի չափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 1.1 ենթակետով կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության արժանացած գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում ներգրավված կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքով զբաղվող անձնակազմին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտային հարկի դրույքաչափի 10% է սահմանված, որը կրկնակի ցածր է հիմնական դրույքաչափից: ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի համաձայն անշարժ գույքի հարկից 50%-ի չափով ազատվում են գյուղատնտեսական հաստատությունների և անտառտնտեսական գիտական կազմակերպությունները, տոհմային և սորտափորձարարական կազմակերպությունները, եթե այդ գույքն օգտագործվում է բացառապես գիտական նպատակով:

Գիտության ոլորտում կուտակված խնդիրների օրենսդրական կարգավորումը ենթադրում է.

- օրենսդրության մեջ ամրագրել ժամանակի մարտահրավերներին համահունչ նպատակներ, սկզբունքներ, կատեգորիաներ, ինստիտուտներ, որոնք ամբողջությամբ կբացահայտեն գիտատեխնիկական գործունեության էությունը, դրա գործունեությունը կհամապատասխանեցնեն ազգային հետաքրքրություններին ու առաջնահերթություններին,

- հաղթահարել աճող էնտրոպիան, գիտական ոլորտի օրենսդրաիրավական կարգավորման համակարգայնության կորուստը, ապահովել դրա համա-

ձայնեցվածությունը արդյունաբերական և տեխնոլոգիական քաղաքականության հետ,

-մշակել գիտական գործունեության արդյունավետության(արդյունքայնության) գնահատման գործող իրավական մեխանիզմ՝ հիմնված որակյալ փորձագիտական գնահատման վրա, որը իր հերթին պետք է համապատասխանի հայրենական մեթոդագիտական և ենթակառուցվածքային բազային:

Այս ամենը պահանջում էր ոչ թե գործող «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ, այլ բոլորովին նոր իրավական ակտի ընդունում, որը պետք է լինի համակարգաստեղծ և սոցիալ-տնտեսական նշանակալի ձեռքբերումների կարգավորիչ: Պետք է մեկընդմիջտ հրաժարվել «լավ է ընդունել և հետո փոփոխել օրենքը, քան չընդունել այն» կարգախոսից, կիրառվող իրավական կառուցակարգերը պետք է ի սկզբանե լինեն գիտականորեն հիմնավորված, ստուգված և գործող: Նոր օրենքը պետք է լուծի հետևյալ խնդիրները.

1.Իրավական կարգավորման առարկայի հստակեցումը, մասնավորապես խոսքը օրենքի անվան մասին է: Այս հարցի շուրջ վիճաբանությունը նոր չէ, սակայն դեռ ավարտված չէ: Գիտության մասին նոր օրենքի հիմնադրույթի ձևավորման ժամանակ պետք է հիմք ընդունել Սահմանադրությունը, գիտության զարգացման ռազմավարությունը, կուտակված և այլ առաջավոր երկրների հաջողված փորձը: Չնսեմացնելով ակադեմիական ազատության սկզբունքի կարևորությունը, հարկ է նկատի ունենալ, որ գիտության օրենսդրական կարգավորումը չի կարող պետական քաղաքականության նորարարական բաղադրիչից տարբեր լինել կամ հակադրվել դրան: Շատ կարևոր է նաև գիտության ոլորտը կարգավորող օրենքը արդյունաբերական քաղաքականությանը համահունչ դարձնելը:

2.Գիտական ոլորտի իրավական կարգավորման մեթոդոլոգիական նոր մոտեցումների փնտրտուքը: Հարկ է ընդունել, որ շուրջ քառորդ դար գործող գիտության մասին օրենքը չդարձավ բազային միավորող, դրա նորմերը համապատասխան հարաբերությունների վրա առաջնահերթ ազդեցություն չունեցան: Գիտական օրենսդրությունը զարգանում էր չհամակարգված, անջատ, իսկ ճյուղային(քաղաքացիական, տնտեսական) օրենսդրությունը ոչ միշտ է պատշաճ ձևով հաշվի առնում գիտական գործունեության առանձնահատկությունները: Վաղուց հայտնի խնդիր է, որ ճյուղային օրենսդրությունը, այդ թվում հարկայինը, բյուջետային, գիտական գործունեության ընկալման իր տրամաբանությունն ունի, և փոխել այդ տրամաբանությունը գիտության ոլորտում գործող մասնագետների ջանքերով անհնար է:

3.Կատեգորիաների համակարգի հստակեցումը, արդիականացումը՝ ներառելով նոր մի շարք տերմիններ, ինչպիսիք են «Գիտության բնագավառում միասնական սոցիալական կողմնորոշմամբ պետական քաղաքականություն», «ՀՀ գիտական ներուժի պահպանումն ու զարգացումը» և այլն:

4.Օրենսդրական մակարդակով հայերենի որպես գիտական լեզվի պահպանմանն ու առաջնությունը միտված համակարգային միջոցառումների իրակա-

նացում: Այդ նպատակով հարկ է պահպանել, զարգացնել գիտական դպրոցների, հաստատությունների ժառանգությունը, պաշտպանել գիտական ճշմարտությունը գեղծարարություններից, որոնք հնարավոր է ներդնել օտարալեզու, օտարածին կատեգորիաներով:

5.Ստեղծված պայմաններին և ազգային առաջնահերթություններին համահունչ գիտական և գիտատեխնիկական զարգացման կառավարման միասնական մեխանիզմների ներդրում: Գիտատեխնիկական զարգացման առաջնահերթությունների իրացման նպատակով հարկ է ապահովել գիտական և այլ կազմակերպությունների ներուժի կենտրոնացված և համախմբված օգտագործումը՝ անկախ տարածքային, գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևերից:

6.ՀՀ գիտատեխնիկական զարգացման կադրային հենքի պահպանումն ու ամրապնդումը, ինչպես նաև գիտական գործունեության ֆինանսական ապահովման մեխանիզմների կատարելագործումը՝ նպատակ ունենալով երաշխավորել տեխնոլոգիական առաջնորդության իրացման ռեսուրսային և ենթակառուցվածքային բավարարվածությունը: Զուգահեռաբար պետք է կատարելագործվի գիտնականների ատեստավորման պետական համակարգը՝ հիմքում ունենալով ոչ միայն ՄԳՇ-ում հրատարակված հոդվածները, այլև գիտական նորույթի առաջարկն ու դրա կիրառելիությունը երկրի զարգացման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման առումով: Գիտության ոլորտի կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործընթացը պետք է պետական քաղաքականության ուղղություն դառնա: Պետք է կատարելագործել գիտնականների վարձատրության համակարգը. սահմանել երաշխիքային համակարգ, ապահովել գիտության և գործարարության կապը: Բիզնեսը պետք է գիտական արդյունքների, նորարարական ներդրումների համար ոչ միայն հարկային արտոնության ձևով խրախուսվի, այլև ամբողջությամբ զգա սոցիալական պատասխանատվության կարևորությունը: Կարելի է նաև մշակել որոշ տնտեսավարողներից(ընդերքօգտագործող, բարձ շահույթ գններացնող, հասարակական մեծ ֆինանսական ռեսուրսներ գններացնող և այլն) պարտադիր, կանոնավոր վճարների գանձման իրավակազմակերպական մեխանիզմներ՝ նպատակ ունենալով ապահովելու գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեություն իրականացնողների ֆինանսավորման հիմքը:

7.Կարևոր են նաև միջազգային համագործակցության հետ կապված խնդիրների քննարկումը: Այս առումով հարկ է խրախուսել ազգային շահերից բխող համագործակցությունը և կանխել նշանակալի գիտական հայտնագործությունների արտահոսքը: Կարծում ենք հիշարժան են նաև գիտական տուրիզմի զարգացման հնարավորությունների բացահայտումը:

Եզրակացություն: ՀՀ-ում գիտության օրենսդրական կարգավորումը բնութագրվում է տիպային հետևյալ թերություններով.

1)Տևական ժամանակ ձևավորված կարգավորման օրենսդրական հիմքը համակարգված բնույթ չունի, նոր օրենքի գնահատականը ժամանակի խնդիր է, պահանջում է գործող ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում:

2) ԱՊՀ մակարդակով ձևավորվել են գիտության ոլորտի կարգավորման օրենսդրական ակտերի մոդելային բազաներ, որոնք բնութագրվում են մշակման բարձր մակարդակով, օրենսդրական ձևակերպումների որակով և իրավական կարգավորման որոշակիությամբ ու հստակությամբ: Մեր առաջարկը այդ մոդելային բազաներից ճիշտ օգտվելու վերաբերյալ է:

3) Գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության փաստաթղթերի ընտրությունը հարկ է կատարել ազգային տնտեսության առանձնահատկությունների հաշվառմամբ:

Գիտության ոլորտի օրենսդրական փոփոխությունների հիմքում պետք է դրվեն հետևյալ խնդիրները.

- տնտեսության կառուցվածքային փոփոխությունների գիտատեխնիկական և ինտելեկտուալ ապահովումը,

- գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության արդյունավետ կազմակերպումն ու տեխնոլոգիական համալրումը,

- ազգի ինտելեկտուալ զարգացումը:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 3-ին հոդվածում սահմանված է, որ գիտական աշխատողը գիտական կազմակերպությունում գիտատեխնոլոգիական գործունեություն իրականացնող, առնվազն մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորում ունեցող և գիտական արդյունք ստեղծող անձն է: Սա, իհարկե, որոշակիորեն տարբեր է «գիտնականը գիտության և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ է, որը զգալի ավանդ ունի գիտության մեջ» նախկինում տրված ընդհանրական որակումից: Սակայն մենք կառաջարկեինք այս ձևակերպումը. «Գիտնականը կրթական կամ գիտական կազմակերպության աշխատակիցն է, որն ունի գիտական և գիտատեխնիկական գործունեության համար անհրաժեշտ որակներ, գիտական աշխատանքներ գրախոսվող հրատարակություններում, որոնք արտացոլում են նոր գիտական և(կամ) գիտատեխնիկական արտադրանքի ստացման արդյունքները»:

Այսօր խնդրահարույց է հիմնարար գիտության զարգացումը: Որպես կանոն բիզնեսը կողմնորոշված է ֆինանսավորել «կարճ» ներդրումներ, որոնք խոստանում են «արագ շահույթ», ուստի հիմնարար գիտության զարգացումը դուրս է գալիս նրա հետաքրքրությունների շրջանակից: Բայց հարկ է գիտակցել, որ գիտատեխնիկական առաջընթացը իրողություն է դառնում զուտ ակադեմիական գիտությունների հայտնագործությունների շնորհիվ: Այս առթիվ շատ կարևոր է հիմնարար գիտությունների զարգացման կարևորությունը ընկալելի դարձնել ոչ միայն պետության, այլև բիզնեսի համար: Պետություն-մասնավոր գործակցությունը պետք է դառնա գիտության, կրթության և բիզնեսի մտավոր ներուժի և նյութատեխնիկական բազայի միավորման ձև: Բնականաբար, այս «միությունը» հարկ է ամրապնդել օրենսդրական մակարդակում՝ սահմանելով վարչարարական և հարկային այլ արտոնություններ: ՀՀ ԿԳՄՄՆ-ը պետք է գործուն քայլեր ձեռնարկի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հայրենական ամսագրերի ընդգրկման համար: Մեր օրերում շատ կարևոր է պետությունների

ազգային գիտատեխնիկական քաղաքականությունը միջազգային գիտատեխնիկական համագործակցության իրավական կարգավորման հետ ներդաշնակեցումը: Այն ենթադրում է գիտատեխնիկական հիմնախնդիրների համատեղ բացահայտումը, դրանց վերաբերյալ լուծումների մշակումը, գիտական ձեռքբերումների, արտադրական փորձի և որակյալ կադրերի փոխանակումը: Նման տիպի համագործակցությունը իրականացվում է կազմակերպական տարբեր ձևերով՝ մրցակցություն, կոորդինացում, համագործակցություն, կոոպերացիա, ինտեգրացիա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 26.12.2000թ., ՀՕ-119
2. «Բնովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 14.06.2006թ., ՀՕ-63-Ն
3. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, 14.17.2006թ., ՀՕ-142-Ն
4. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, 09.10.2025թ., ՀՕ-285-Ն
5. «Բնովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության առ 19.10.2006թ. N1466 որոշումը
6. «Բնովացիոն բնագավառում լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության առ 07.09.2006թ. N1252Ա որոշումը
7. «Բնովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության առ 02.08.2007թ. N878-Ն որոշումը
8. «Բնովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության առ 02.08.2007թ. N877-Ն որոշումը,
9. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 2-ի N878-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության առ 12.11.2015թ. N1311-Ն որոշումը,
10. «Բնովացիոն նախագծերի մրցույթի հայտի ձևը և գնահատման չափանիշները սահմանելու մասին»ՀՀ էկոնոմիկայի նախարարի02.03.2016թ.N166-Ն հրաման
11. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 2-ի N878-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ի N1311-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության առ 12.05.2016թ. N483-Ն որոշում,
12. ՀՀ կառավարության 17.02.2011թ. N6արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Բնովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության Հայեցակարգ

13. Алесеев С.С. Структура советского права. М.: Юридическая литература. 1975, С.176
14. Ринг М.П. Правовое регулирование научно-технического прогресса // Советское государство и право. 1972. N2. С.113
15. Савченко Д.А. Механизм правовой охраны научных отношений: основные элементы // Российско-азиатский правовой журнал. 2020, N2, С28
16. Семенов Е.В. Научно-технологическая сфера (сфера НИОКТР): способы представления объекта / Е.В. Семенов // Наука. Инновации. Образование 2013 N14
17. Степин В.С. Философия науки. Общие проблемы. М.: Гардарики, 2006. С. 34
18. Федькин Г.И. Правовые вопросы организации научной работы в СССР. М.: Госюриздат, 1958, С.340
19. Черникова И.В. Природа науки и критерии научности // Гуманитарный вектор 2012. N3. С.94
20. Floridi, L. (2014). The Fourth Revolution: How the Infosphere is Reshaping Human Reality. Oxford University Press.
<https://global.oup.com/academic/product/the-fourth-revolution-9780199606726>
21. Kraemer JD .The Limits of Government Regulation of Science. <https://www.science.org/doi/10.1126/science.1219215>
22. UNESCO. (1999). World Conference on Science: Science for the 21st Century. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000127435>
23. Science and Security in a Post 9/11 World: A Report Based on Regional Discussions Between the Science and Security Communities. <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK11485/>
24. Stilgoe, J., Owen, R., & Macnaghten, P. (2013). Developing a framework for responsible innovation. Research Policy, 42(9), 1568-1580. <https://doi.org/10.1016/j.respol.2013.05.008>
25. Իրավական տեղեկատվական կենտրոնի կայք-էջ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>
26. ՀՀ վիճակագրական պետական կոմիտեի պաշտոնական կայք <https://armstat.am/am/>

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում գիտության օրենսդրական կարգավորման հիմնախնդիրներին: Վերլուծվել է գործող դաշտը, բացահայտվել առկա խնդիրները, զարգացման հնարավորությունները: Դիտարկվել են օրենսդրական բացերն ու հակասությունները, առաջարկվել որոշ օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում լրացումներ ու փոփոխություններ: **Մեր նպատակն է** գիտության

օրենսդրական կարգավորման հիմնահարցերի բացահայտմամբ նախանշել դրանց լուծմանը միտված առաջարկություններ: Հիշյալ նպատակի իրացման համար **խնդրադրել ենք** ուսումնասիրել գիտության օրենսդրական դաշտը ՀՀ-ում, բնութագրել գիտության իրավունքի տարանջատման չափանիշները, բացահայտել գիտական գործունեության օրենսդրական կարգավորման առկա բացերը, առաջարկել դրանց վերացման ուղիներ: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական հետազոտության համեմատական, նկարագրական, տնտեսավիճակագրական և համադրման **մեթոդներ**: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտին առնչվող գիտական աշխատությունները, ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: Մեր կողմից իրականացված վերլուծությունը հիմք ծառայեց **որոշ եզրահանգումների համար**, որոնք միաժամանակ նախանշել են հիմնական առաջարկությունների բովանդակությունն ու ուղղությունները: ՀՀ-ում գիտության օրենսդրական կարգավորումը բնութագրվում է տիպային հետևյալ թերություններով.

1) Տևական ժամանակ ձևավորված կարգավորման օրենսդրական հիմքը համակարգված բնույթ չունի, նոր օրենքի գնահատականը ժամանակի խնդիր է, պահանջում է գործող ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցում:

2) ԱՊՀ մակարդակով ձևավորվել են գիտության ոլորտի կարգավորման օրենսդրական ակտերի մոդելային բազաներ, որոնք բնութագրվում են մշակման բարձր մակարդակով, օրենսդրական ձևակերպումների որակով և իրավական կարգավորման որոշակիությամբ ու հստակությամբ: Մեր առաջարկը այդ մոդելային բազաներից ճիշտ օգտվելու վերաբերյալ է:

3) Գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության փաստաթղթերի ընտրությունը հարկ է կատարել ազգային տնտեսության առանձնահատկությունների հաշվառմամբ:

Գիտության ոլորտի օրենսդրական փոփոխությունների հիմքում պետք է դրվեն հետևյալ խնդիրները.

-տնտեսության կառուցվածքային փոփոխությունների գիտատեխնիկական և ինտելեկտուալ ապահովումը,

-գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության արդյունավետ կազմակերպումն ու տեխնոլոգիական համալրումը,

-ազգի ինտելեկտուալ զարգացումը:

Պետություն-մասնավոր գործակցությունը պետք է դառնա գիտության, կրթության և բիզնեսի մտավոր ներուժի և նյութատեխնիկական բազայի միավորման ձև: Հիշյալ «միությունը» օրենսդրական ամրագրման կարիք ունի՝ վարչարարական և հարկային այլ արտոնությունների սահմանմամբ:

Բանալի բառեր. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն, օրենսդրական կարգավորում, գիտնական, գիտական աշխատող, գիտության իրավունք, ինովացիոն գործունեության, գիտական արդյունք:

ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ НАУКИ В РА

МАНУШ МИНАСЯН
ТАТЕВИК ШАГИНЯН

Анотация

Статья посвящена вопросам законодательного регулирования науки в Республике Армения. Проанализирована текущая ситуация, выявлены существующие проблемы и возможности развития. Отмечены законодательные пробелы и противоречия, предложены поправки и дополнения к некоторым законам и подзаконным актам. Наша цель—выявить ключевые проблемы в законодательном и правовом регулировании науки и наметить предложения, направленные на их разрешение. Для достижения указанной цели нами была поставлена задача изучить законодательную базу науки в Республике Армения, охарактеризовать критерии разграничения научного права, выявить имеющиеся пробелы в законодательном регулировании научной деятельности и предложить пути их устранения. В ходе исследования были использованы сравнительный, описательный, экономико-статистический и сопоставительный методы научного исследования. Информационной основой статьи послужили научные труды по данной тематике, а также нормативные акты, регламентирующие данную сферу. Проведенный нами анализ послужил основой для определенных выводов, которые одновременно обозначили содержание и направления основных рекомендаций. Законодательное регулирование науки в Республике Армения характеризуется следующими типичными недостатками:

1) Законодательная база регулирования, формировавшаяся в течение длительного периода времени, не имела скоординированного характера; оценка нового закона — вопрос времени, требующий гармонизации существующих подзаконных актов.

2) На уровне СНГ сформированы образцовые базы законодательных актов, регулирующих научную сферу, которые характеризуются высоким уровнем развития, качеством законодательных формулировок, а также определенностью и ясностью правового регулирования. Наше предложение касается правильного использования этих образцовых баз.

3) Отбор документов для международного сотрудничества в области науки и научно-технической деятельности должен осуществляться с учетом особенностей народного хозяйства.

В основу законодательных изменений в области науки следует ставить следующие вопросы:

-научно-техническая и интеллектуальная поддержка структурных изменений в экономике,

-эффективная организация и технологическое пополнение научно-технической и инновационной деятельности,

-интеллектуальное развитие нации.

Государственно-частное партнерство должно стать формой объединения интеллектуального потенциала и материально-технической базы науки, образования и бизнеса. Упомянутый «союз» нуждается в законодательном закреплении, а также в определении других административных и налоговых привилегий.

Ключевые слова: Научная и научно-техническая деятельность, законодательное регулирование, ученый, научный работник, научное право, инновационная деятельность, научные результаты

ISSUES OF LEGISLATIVE REGULAION OF SCIENCE IN RA

MANUSH MINASYAN
TATEVIK SHAHINYAN

Abstract

The article analyzes the legislative regulation of science in the Republic of Armenia, focusing on the current legal framework, existing challenges, and opportunities for development. The study identifies legislative gaps, inconsistencies, and ambiguities that hinder the effective regulation of scientific activity and proposes amendments and additions to selected laws and sub-legislative acts. Special attention is given to clarifying key legal concepts in order to avoid misinterpretation and improve regulatory coherence.

The main objective of the research is to identify systemic problems in the legislative regulation of science in Armenia and to formulate practical proposals for their resolution. To achieve this goal, the study examines the national legislative framework governing scientific activity, outlines criteria for distinguishing scientific law as an independent field, identifies regulatory deficiencies, and suggests mechanisms for improving legal effectiveness.

The research methodology includes comparative, descriptive, economic-statistical, and analytical methods. The empirical and analytical basis of the study consists of academic literature, national legislation, and normative legal acts regulating scientific, scientific-technical, and innovation activities. The results of the analysis form the foundation for the study's conclusions and recommendations.

The findings reveal several key shortcomings in Armenia's legislative regulation of science. First, the legal framework has evolved in a fragmented and uncoordinated manner, and the effectiveness of recently adopted legislation largely depends on the harmonization of existing sub-legislative acts. Second, model legislative frameworks developed within the Commonwealth of Independent States (CIS) demonstrate a high level of legal clarity and regulatory quality and may serve as a useful reference for

national reforms. Third, international cooperation instruments in science should be selected with due consideration of the structural characteristics and priorities of the national economy.

The study concludes that legislative reforms should prioritize scientific and intellectual support for economic structural transformation, effective organization and technological modernization of research and innovation, and the intellectual development of the nation. Strengthening public-private partnerships through clear legal frameworks and targeted administrative and fiscal incentives is identified as a key mechanism for achieving these objectives.

Key words. Scientific and scientific-technical activities, legislative regulation, scientist, scientific worker, science law, innovation activity, scientific result.